ՀՀ տարածքային
կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն

Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz

ՀՀ պատական
կառավարման
ակադեմիա

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՄՈԴՈՒԼ 2.

Համայնքի ավագանի-համայնքի ղեկավար փոխհարաբերությունների շրջանակը

Երևան, 2026

Ուսումնական մոդուլը մշակվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի կողմից՝ ԳՄՀԸ/GIZ համագործակցության շրջանակում **«Ավագանու անդամների վերապատրաստման կարիքների գնահատում և կարողությունների զարգացում»** ծրագրով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈԴՈՒԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 4

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 7

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ 8

ՄԱՍ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ - ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ (ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ) 9

ՄԱՍ 2. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ) 38

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 54

ՆՅՈՒԹԵՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 56

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 57

ՄՈԴՈՒԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մոդուլի նպատակը	Համայնքների ավագանիների անդամների կարողությունների զարգացում
Մոդուլի խնդիրները	Տեսական և պրակտիկ ուսուցման միջոցով զարգացնել ունկնդիրների գիտելիքները ՀՀ հողային օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքներով համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի փոխհարբերությունների և օրենքով համայնքի ղեկավարին վերապահված ոլորտային լիազորությունների իմացության մակարդակը, ընդլայնել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների մասին իրազեկվածության շրջանակը, նպաստել ավագանու նիստերին, հանձնաժողովների և խմբակցությունների աշխատանքներին արդյունավետ մասնակցելու ավագանու անդամի հմտությունների ձևավորմանը և աջակցել համայնքային խնդիրների լուծմանը ներգրավվածություն ունենալու կարողությունների կատարելագործմանը:
Մոդուլի տևողությունը	1-4 ժամ
Մուտքային պահանջները	Մոդուլն ուսումնասիրելուց առաջ ունկնդիրը պետք է առնվազն ընդհանրական գիտելիքներ ունենա ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի հիմունքների, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ընդհանուր բնույթի, ավագանու անդամի իրավական կարգավիճակի հիմնական տարրերի վերաբերյալ:
Ուսումնասիրվող թեմաները	**Թեմա 1.** Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի փոխհարաբերությունների շրջանակը ՀՀ Սահմանադրության և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի կարգավորումների համատեքստում **Թեմա 2.** Ավագանու լիազորությունները համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու գործընթացներում **Թեմա 3.** Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի փոխհարաբերությունների շրջանակը ՀՀ հողային օրենսգրքի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Քաղաքաշինության մասին»

	օրենքների կարգավորումների համատեքստում **Թեմա 4.** «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով համայնքի ղեկավարին վերապահված ոլորտային լիազորությունների ընդհանուր բնութագիրը
Մոդուլի գնահատման կարգը և միջոցները	Գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքի միջոցով: Թեստային առաջադրանքը կազմված է մոդուլի թեմաներին անդրադարձող **10** հարցից: Թեստային առաջադրանքի յուրաքանչյուր հարցի համար սահմանված է միավոր՝ ելնելով դժվարության մակարդակից և թեմային համապատասխանությունից: Թեստային առաջադրանքը համարվում է հաջողությամբ ավարտված, եթե ճիշտ պատասխանները կազմում են առաջադրանքի բոլոր հարցերի առնվազն 70%-ը:
Վերապատրաստման դասընթացից ակնկալվող արդյունքները *(գիտելիքներ, հմտություններ, կարողություններ)* Այս մոդուլը հաջողությամբ ավարտելուց հետո ունկնդիրը պետք է՝	
Արդյունք 1.	*կարողանա ներկայացնել տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների շրջանակը՝ ՀՀ հողային օրենսգրքի, «Տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Քաղաքաշինության մասին» օրենքների կարգավորումների համատեքստում*
Արդյունք 2.	*կարողանա տիրապետել ավագանու լիազորությունների շրջանակին՝ համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու ընթացակարգերին*
Արդյունք 3.	*իմանա հողօգտագործման, քաղաքաշինության, բնագավառներում և համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպման, համայնքի բյուջեի կառավարման շրջանակներում համայնքի ավագանու լիազորությունները, պատկերացնել այդ բնագավառներում ավագանու կողմից ընդունվող որոշումների շրջանակը և հասկանալ դրանց կարևորությունը*
Արդյունք 4.	*իմանա օրենքով համայնքի ղեկավարին վերապահված ոլորտային հիմնական լիազորությունները*

Մոդուլի ուսուցման մեթոդաբանությունը	*Մոդուլի ուսուցման ընթացքում, ի լրումն ներկայացված տեսական նյութի մատուցման, անհրաժեշտ է կիրառել ինտերակտիվ ուսուցման առնվազն հետևյալ եղանակները.* • *աշխատանք խմբերով* • *անհատական առաջադրանքների կատարում* • *դեպքերի/իրավիճակների քննարկում* *ինքնակրթություն՝ լրացուցիչ նյութերի ընթերցում և դիտում*
Մոդուլի ուսուցման համար անհրաժեշտ ռեսուրսները	• *մոդուլին և թեմայի առանձնահատկություններին տիրապետող փորձագետ* • *ուսումնական տարածք՝ կահավորված անհրաժեշտ սարքավորումներով ու նյութերով*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՊՄԳ	Պետություն-մասնավոր գործընկերություն

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Համայնք	Մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրություն, վարչատարածքային միավոր
Տեղական ինքնակառավարում	Համայնքային նշանակության հանրային հարցերը լուծելու տեղական ինքնակառավարման մարմինների իրավունք և կարողություն
Համայնքի ավագանի	Համայնքի ներկայացուցչական մարմին
Համայնքի ղեկավար	Համայնքի գործադիր մարմին
Համայնքի ավագանու անդամ	Համայնքային քաղաքական պաշտոն
Համայնքապետարանի աշխատակազմ	Համայնքային կառավարչական հիմնարկ

ՄԱՍ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ - ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ (ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ)

Թեմա 1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի փոխհարաբերությունների շրջանակը ՀՀ Սահմանադրության և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի կարգավորումների համատեքստում

Համայնքի ղեկավարը կատարում է համայնքի ավագանու որոշումները, իրականացնում է համայնքի աշխատակազմի ընդհանուր ղեկավարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌՋԵՎ:

ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդված

Աշխատակազմի խնդիրն է
օրենքներով, այլ իրավական ակտերով և աշխատակազմի կանոնադրությամբ
համայնքի ղեկավարին օրենքով և ավագանու կանոնակարգով նախատեսված դեպքերում նաև՝ավագանուն, վերապահված լիազորությունների
լիարժեք և արդյունավետ իրականացման,
ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցության ապահովումը:

Տեղական ինքնակառավարման համակարգի կարևոր խնդիրներից է
ՏԻՄ-երի գործունեության կազմակերպումը,
նրանց գործադիր և ներկայացուցչական մարմինների
համայնքի շահերից բխող
լավագույն որոշումների ընդունմանը և դրանց իրագործմանը
նպատակաուղղված փոխհարաբերությունների հաստատումը:

Համայնքի ավագանին
արտահայտելով համայնքի ողջ բնակչության շահերը,
մշակում և սահմանում է որոշակի կանոններ և նորմեր,
հաստատում է համայնքի ղեկավարի կողմից ներկայացված
համայնքի զարգացման ծրագրերը:

Համայնքի ղեկավարը,
ավագանու կողմից սահմանված
առաջնահերթությունների ու սահմանափակումների հիման վրա,
ռեսուրսների տնօրինման միջոցով
իրականացնում է համայնքի զարգացման ծրագրերը:

Համայնքի ավագանին
կարող է քննարկել համայնքի շահերին վերաբերող ցանկացած հարց
և դրանց վերաբերյալ ընդունել որոշումներ,
իր իրավասությունից դուրս գտնվող հարցերի առնչությամբ
ավագանին կարող է ընդունել ուղերձներ՝
ուղղված համայնքի բնակչությանը, համայնքի ղեկավարին,
մարզպետին կամ այլ մարմինների և կազմակերպությունների:

Իր իրավասության շրջանակում
ավագանու ընդունած որոշումները
ենթակա են կատարման համայնքի տարածքում:

Համայնքի ղեկավարն իր հերթին ընդունում է միանձնյա
որոշումներ, որոնք նախապատրաստվում են համայնքապետարանի
աշխատակազմի կողմից:
Համայնքի ղեկավարը պատասխանատվություն է կրում համայնքի
ավագանու և իր կողմից ընդունված որոշումների կատարման համար:

Համայնքի ավագանու որոշումների վերաբերյալ համայնքի ղեկավարը <u>եռօրյա ժամկետում</u> ավագանուն կարող է ներկայացնել գրավոր առարկություններ և առաջարկություններ՝ համապատասխան հիմնավորումներով, եթե ավագանու որոշումը, իր կարծիքով, հակասում է ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին կամ ավագանու նախկին որոշումներին:

****

Համայնքի ավագանու անդամը համայնքի ղեկավարի որոշումները ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարող է օրենքով սահմանված կարգով նախաձեռնել ավագանու արտահերթ նիստ, եթե համայնքի ղեկավարի որոշումը, իր կարծիքով, հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին:

Այս դեպքում ավագանու նիստ պետք է հրավիրվի այդ մասին պահանջը համայնքի ղեկավարին ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում: Եթե համայնքի ավագանին գտնի, որ համայնքի ղեկավարի որոշումը հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին, ապա նա պարտավոր է համայնքի ղեկավարին ներկայացնել գրավոր բողոք՝ համապատասխան հիմնավորումներով, առաջարկելով համայնքի ղեկավարին փոփոխելու իր որոշումը:

****

Համայնքի ղեկավարի կարծիքով ավագանու որոշումները ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին կամ ավագանու նախկին որոշումներին հակասելու վերաբերյալ համայնքի ղեկավարի ավագանուն ներկայացրած համապատասխան հիմնավորումներով գրավոր առարկությունների և առաջարկությունների, ինչպես նաև՝ համայնքի ավագանու անդամի կարծիքով համայնքի ղեկավարի որոշումները ՀՀ օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին հակասելու վերաբերյալ նախաձեռնության քննարկումների ընթացակարգերը սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով:

****

Համայնքի ավագանու որոշումները՝ համայնքի ղեկավարը, իսկ համայնքի ղեկավարի որոշումները՝
համայնքի ավագանին կարող են բողոքարկել դատական կարգով:

Համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը

համագործակցում են համայնքային հարցերի լուծմանը ուղղված որոշումների մշակման, ընդունման և դրանց կատարման վերահսկողության բոլոր փուլերում:

Համայնքի ավագանու նիստերի
օրակարգի նախագիծը ձևավորվում է
համայնքի ղեկավարի, ավագանու անդամների, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարների կողմից աշխատակազմի քարտուղարին՝
նիստից առնվազն տասն օր առաջ ներկայացված գրավոր հարցերից:
Համայնքի ավագանու նիստի օրակարգում
հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ
նաև համայնքում հաշվառված բնակիչները՝ օրենքով սահմանված կարգով:

Համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով՝ հրավիրում և վարում է ավագանու նիստերը՝ օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով:

Համայնքի ղեկավարն
ավագանու նստավայրում
անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ավագանու՝
օրենքով և իր կանոնակարգով
նախատեսված կարգով գործունեության իրականացման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ,

ՈՐՈՎ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԵՆ ԱՎԱԳԱՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՆԻՍՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ:

Ավագանու գործունեության կազմակերպումը

Ավագանին գործում է իր կանոնակարգին համապատասխան՝ նիստերի, հանձնաժողովների, խմբակցությունների աշխատանքի միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

- Ավագանին իր գործունեությունը կազմակերպում է ավագանու անդամների, ավագանու խմբակցությունների, մշտական և ժամանակավոր հանձնաժողովների միջոցով:

- Ավագանու աշխատանքի հիմնական ձևը ավագանու հերթական և արտահերթ նիստերն են, որոնք անցկացվում են դռնբաց: Ավագանու որոշմամբ կարող են անցկացվել դռնփակ նիստեր: Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված՝ կարող են հրավիրվել ավագանու հեռավար եղանակով նիստեր: Ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին:

- Ավագանու հիմնական գործունեությունը իրավաստեղծ գործունեությունն է: Ավագանու նիստում կարող է քննարկվել համայնքի շահերին վերաբերող ցանկացած հարց: Քննարկվող հարցերի վերաբերյալ ավագանին ընդունում է որոշումներ: Համայնքի շահերին վերաբերող, բայց իր իրավասություններից դուրս հարցերի առնչությամբ ավագանին կարող է ընդունել ուղերձներ՝ ուղղված Համայնքի բնակչությանը, Համայնքի ղեկավարին, մարզպետին, պետական

կամ այլ մարմինների և կազմակերպությունների:

- Համայնքի ղեկավարն ավագանու նստավայրում անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ավագանու՝ օրենքով և իր կանոնակարգով նախատեսված կարգով գործունեության իրականացման համար:

****

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

- Ավագանին իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար ստեղծում է մշտական, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ժամանակավոր հանձնաժողովներ:
- Մշտական հանձնաժողովները ստեղծվում են ավագանու իրավասության մեջ մտնող հարցերի քննարկման և նախապատրաստման, իրավաստեղծ աշխատանք իրականացնելու, ավագանու նիստի օրակարգում ընդգրկվող որոշումների նախագծերի և այլ հարցերի նախնական քննարկման, դրանց վերաբերյալ ավագանուն եզրակացություններ, կարծիքներ տալու, ինչպես նաև ավագանու ընդունած որոշումների կատարման նկատմամբ հսկողություն կազմակերպելու նպատակով:
- Նորընտիր ավագանու մշտական հանձնաժողովները ստեղծվում են տվյալ գումարման ավագանու լիազորությունների ժամկետի համար և հանդիսանում են նրա կառուցվածքի մասը:
- Մշտական հանձնաժողովների թիվը որոշում է ավագանին՝ հաշվի առնելով դրանց գործունեության հիմնական ուղղությունները: Ավագանին կարող է ստեղծել 3-5 մշտական հանձնաժողովներ: Հանձնաժողովների անդամների քանակական կազմը որոշելիս հիմք է ընդունվում ավագանու անդամների թիվը՝ այն հաշվարկով, որ ավագանու յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունենա ընդգրկվելու որևէ մշտական հանձնաժողովի կազմում:
- Կարող են լինել զարգացման ծրագրերի, ֆինանսաբյուջետային, տնտեսական հարցերի, քաղաքաշինության, հողօգտագործման և անշարժ գույքի հարցերի, կրթության, մշակույթի, սպորտի, սոցիալական հարցերի, համայնքային կազմակերպություններին և ենթակառուցվածքներին առնչվող հարցերի և իրավական այլ հարցերի մշտական հանձնաժողովներ:
- Համայնքի ղեկավարը մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց անհատական կազմերը հաստատելու մասին որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը:
- Անհրաժեշտության դեպքում ավագանին կարող է ստեղծել ժամանակավոր հանձնաժողովներ, որոնց կազմը, խնդիրները, լիազորությունների շրջանակը, ժամկետները և աշխատակարգը սահմանվում են ավագանու որոշմամբ:
- Ժամանակավոր հանձնաժողովները ստեղծվում են տեղական ինքնակառավարման ոլորտի առանձին հարցերի նախնական քննարկման կամ որոշակի խնդիրների, իրադարձությունների, փաստերի մասին ավագանուն

եզրակացություններ, տեղականքներ, կարծիքներ, վերլուծություններ ներկայացնելու նպատակով:

****

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- **Մշտական հանձնաժողովների լիազորություններն ու գործունեության կարգը սահմանվում են ավագանու կանոնակարգով և հանձնաժողովների կողմից ընդունվող աշխատակարգերով:**

- **Մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին ավագանու որոշման ընդունումից հետո գումարվում են հանձնաժողովների առաջին նիստերը, որոնց ժամանակ հանձնաժողովների կազմերից ընտրվում են հանձնաժողովների նախագահներն ու քարտուղարները և ընդունվում են հանձնաժողովների աշխատակարգերը:**

- **Ավագանու նիստի օրակարգում ընդգրկվող հարցերը պետք է նախապես քննարկվեն ավագանու իրավասու հանձնաժողովներում: Իրավասու հանձնաժողովը ավագանու այն մշտական հանձնաժողովն է, որի իրավասությանն է վերաբերում նիստի օրակարգում ընդգրկվող հարցի քննարկումը:**

- **Համայնքի ղեկավարը, նրա առաջին տեղակալը, ինչպես նաև Ավագանու յուրաքանչյուր անդամ իրավունք ունեն մասնակցելու մշտական հանձնաժողովների ցանկացած նիստի, քննարկվող հարցի վերաբերյալ հարցեր տալ, ներկայացնել առաջարկություններ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:**

- **Ավագանու նիստում յուրաքանչյուր հարցի քննարկման ժամանակ իրավասու մշտական հանձնաժողովի նախագահն այդ հարցի վերաբերյալ ներկայացնում է հանձնաժողովի ընդունած եզրակացությունը (կարծիքը):**

- **Հանձնաժողովների նախագահները համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին գրավոր տեղեկանքներ են ներկայացնում՝ հանձնաժողովի նիստերից հանձնաժողովի անդամների բացակայությունների մասին:**

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

- **Համամասնական ընտրակարգով ընտրված ավագանու խմբակցություններն օրենքի ուժով ստեղծվում են նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի առաջին նիստում:**

- **Խմբակցությունների գործունեությունը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, ավագանու կանոնակարգով, խմբակցության կանոնադրությամբ և ավագանու որոշումներով:**

- **Խմբակցությունները ստեղծվում են տվյալ գումարման ավագանու լիազորությունների ժամկետի համար և հանդիսանում են նրա կառուցվածքի մասը:**
- **Խմբակցության ղեկավարը նորընտիր համայնքի ղեկավարի լիազորությունները ստանձնելուց հետո նրան է ներկայացնում խմբակցության կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները, ազգանունները, որոնք համանքի ղեկավարը կամ ավագանու նիստը վարողը հրապարակում է ավագանու առաջիկա նիստում:**

- **Համայնքապետարանի նիստերի դահլիճում կամ ավագանու որոշած այլ վայրում համայնքի ղեկավարը խմբակցություններին ապահովում է կահավորված, տեխնիկական և կապի միջոցներով հագեցած առանձին աշխատասենյակներով:**

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- **Ավագանու անդամը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով համապատասխան խմբակցության ղեկավարին և համայնքի ղեկավարին: Խմբակցության գործունեությունը դադարում է, եթե նրա բոլոր անդամները դուրս են գալիս խմբակցությունից:**

- **Խմբակցության ղեկավարի և քարտուղարի փոփոխության, խմբակցության կազմի փոփոխության, ինչպես նաև գործունեության դադարման մասին խմբակցության ղեկավարը գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը կամ ավագանու նիստը վարողը այդ մասին հայտարարում է ավագանու առաջիկա նիստում:**

Հարկավոր է հիշել, որ ...

- **Ավագանու անդամի իրավունքներն ու պարտականությունները սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով և ավագանու կանոնակարգով:**
- **Համայնքի ղեկավարն իր լիազորություններն ստանձնում է իր ընտրվելուց հետո՝ երրորդ օրացուցային օրը, ավագանու՝ օրենքի ուժով հրավիրված նիստում համայնքի բնակիչներին տրված երդմամբ:**
- **Համայնքի ղեկավարի երդման արարողության կարգը սահմանվում է ավագանու կանոնակարգով:**
- **Ավագանու անդամը պարտավոր է՝ավագանու կանոնակարգով սահմանված կարգով անդամակցել ավագանու որևէ մշտական հանձնաժողովի, մասնակցել դրա նիստերին:**

Համայնքի ավագանու որոշումը

ստորագրում է

նիստը վարողը (համայնքի ղեկավարը, նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը կամ համայնքի ղեկավարի պաշտոնակատարը կամ համայնքի ավագանու տարիքով ավագ անդամը՝ համայնքի ղեկավարի կողմից մինչև մեկ ամիս ժամկետով իր ծառայողական պարտականությունների կատարման անհնարինության և համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը թափուր լինելու դեպքում):

Ավագանու նիստերի արձանագրություններն ստորագրում են նիստը վարողը և ավագանու նիստին մասնակցած անդամները:

Աշխատակազմի քարտուղարը՝
կազմակերպում և ապահովում է
աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների կողմից համայնքի ավագանու
որոշման նախագծերի նախապատրաստմանը:

Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի փոխհարաբերություններում կարևոր տեղ ունեն նրանց կողմից ընդունված որոշումների կատարման օրենքով սահմանված վերահսկման լիազորությունները:

****

Համայնքի ավագանին վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ՝ համայնքի ղեկավարից պահանջելու և ստանալու նրա, աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և ավագանու հանձնաժողովների միջոցով:

****

Աշխատակազմի քարտուղարը՝ վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման նկատմամբ:

Թեմա 2. Ավագանու լիազորությունները համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու գործընթացներում

<u>Համայնքի ավագանին կարող է ընդունել</u>

օրենքով սահմանված կարգով

համամասնական ընտրակարգով ընտրվող

ավագանի ունեցող

համայնքի ղեկավարին

անվստահություն հայտնելու որոշում:

ՀՀ օրենսդրությամբ մեծամասնական

ընտրակարգով ընտրված համայնքի ղեկավարին

անվստահություն հայտնելու

իրավակարգավորում չի նախատեսվել:

Համամասնական ընտրակարգով ընտրվող ավագանի ունեցող համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու գործընթացը

Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու

որոշման նախագիծ կարող է ներկայացնել

ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը:

****

Որոշման նախագիծը ներառում է

ավագանու այն անդամի անուն-ազգանունը, որին նախաձեռնող խումբն առաջադրում է որպես համայնքի ղեկավարի թեկնածու,

ինչպես նաև այն պետք է ստորագրեն նախաձեռնող խմբի բոլոր անդամները:

****

Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշման նախագիծը

հանձնվում է

համայնքի ղեկավարին, ինչպես նաև ավագանու խմբակցություններին:

Ավագանու խմբակցություններն այդ մասին

անհապաղ տեղեկացնում են իրենց խմբակցությունների անդամներին:

****

Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը

ներկայացվելուց հետո՝ 36 ժամվա ընթացքում, նախաձեռնող խմբի մեջ չմտնող

ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը

կարող է ևս ներկայացնել

համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշման նախագիծ՝

առաջադրելով համայնքի ղեկավարի այլ թեկնածու:

****

Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին

որոշման նախագիծը ներկայացնելուց հետո՝

երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 10.00-ին, օրենքի ուժով

հրավիրվում է ավագանու նիստ,

որում գաղտնի քվեարկությամբ որոշվում է

համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու հարցը:

****

Քվեարկությունն անցկացվում է գաղտնի՝ քվեաթերթիկների միջոցով,

որոնցում ընդգրկվում է

համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագծով առաջադրված թեկնածուն,

իսկ եթե այդպիսի նախագծերը մեկից ավելի են,

ապա համապատասխան քանակով թեկնածուները:

****

Ավագանու յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

****

Համայնքի ղեկավարին անվստահություն է հայտնվում,

եթե առաջադրված թեկնածուն (թեկնածուներից մեկը) ստանում է

ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը:

****

Եթե առաջադրված թեկնածուն (թեկնածուներից մեկը) ստանում է

ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը,

ապա գործող համայնքի ղեկավարը վայր է դնում իր լիազորությունները,

իսկ նորընտիր համայնքի ղեկավարն իր լիազորություններն ստանձնում է մեկշաբաթյա ժամկետում:

Հարկավոր է իմանալ, որ ...

Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ ներկայացնելու

նախաձեռնություն կարող է ցուցաբերվել

համայնքի ղեկավարի լիազորություններն ստանձնելուց և անվստահության հարցը քննարկելուց

ոչ շուտ, քան մեկ տարի հետո:

****

Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու առաջարկություն

չի կարող ներկայացվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

Համայնքի ավագանին է

կայացնում որոշում կամ կազմում արձանագրություն

համայնքի ղեկավարի և ավագանու անդամի

լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ:

Մեծամասնական ընտրակարգով ընտրված համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցվում են, եթե՝

1) նա հրաժարական է տվել.

2) նա վեց ամիս անընդմեջ չի հրավիրում համայնքի ավագանու նիստ:

Համայնքի ղեկավարը հրաժարականի մասին իր դիմումը

<u>եռօրյա ժամկետում կարող է հետ վերցնել:</u>

Համայնքի ղեկավարի կողմից հրաժարականի մասին իր դիմումը

եռօրյա ժամկետում հետ չվերցնելու դեպքում

աշխատակազմի քարտուղարի կողմից

համայնքի ղեկավարի հրաժարականի մասին

պատշաճ ձևով ծանուցվելուց հետո

համայնքի ավագանին եռօրյա ժամկետում կազմում է համայնքի ղեկավարի լիազորությունների

վաղաժամկետ դադարեցման մասին արձանագրություն:

Արձանագրություն չկազմվելու դեպքում համայնքի ղեկավարի լիազորություններն

օրենքի ուժով համարվում են

վաղաժամկետ դադարեցված:

Համայնքի ղեկավարի կողմից վեց ամիս անընդմեջ

համայնքի ավագանու նիստ չհրավիրելու դեպքում՝

ավագանին ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ

ընդունում է

համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշում:

Համամասնական ընտրակարգով ընտրվող ավագանի ունեցող համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցվում են՝

օրենքով սահմանված կարգով անվստահություն հայտնելու դեպքում:

Մեծամասնական ընտրակարգով ընտրված համայնքի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցվում են, եթե՝

1) դադարեցվել է նրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

2) նա դադարել է համայնքի բնակիչ լինելուց.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է ազատազրկման և կրում է պատիժը.

4) նա զորակոչվել կամ ծառայության է անցել զինված ուժերում և այլ զորքերում.

5) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նա անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած է ճանաչվել.

6) նա ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն է զբաղեցնում.

7) նա մեկ տարվա ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների կամ մշտական հանձնաժողովի նիստերի (որը պետք է արտացոլված լինի իր մասնակցությամբ ավագանու նիստերի ընթացքում ընդունված փաստաթղթերի ստորագրություններով) ավելի քան կեսից.

8) նա հրաժարական է տվել:

Վերոնշյալ դեպքերում, բացառությամբ 7-րդ կետի, ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են օրենքի ուժով:

7-րդ կետում սահմանված դեպքում՝

համայնքի ավագանին նիստին ներկա ավագանու անդամների ձայների երկու երրորդով

ընդունում է

համայնքի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ

դադարեցնելու մասին որոշում կամ նիստ գումարելու անհնարինության դեպքում ավագանու մյուս անդամները կազմում են արձանագրություն, որը հաստատվում է

ներկա ավագանու անդամների երկու երրորդով:

Համամասնական ընտրակարգով ընտրված համայնքի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցվում են, եթե՝

1) դադարել են ավագանու լիազորությունները.

2) նա կորցրել է համայնքի ավագանու ընտրական իրավունքը.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նա անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած է ճանաչվել.

4) նա ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել.

5) նա ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու պահից մեկ շաբաթվա ընթացքում այդ մասին գրավոր չի տեղեկացրել համայնքի ղեկավարին.

6) նա հրաժարական է տվել:

Ավագանու անդամի լիազորությունները կարող են

վաղաժամկետ դադարեցվել՝

ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ

ընդունված որոշմամբ,

եթե նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում

անհարգելի պատճառով բացակայել է

ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից

կամ հանձնաժողովի նիստերի կեսից:

Թեմա 3. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի փոխհարաբերությունների շրջանակը ՀՀ հողային օրենսգրքի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Քաղաքաշինության մասին» օրենքների կարգավորումների համատեքստում:

ՀՀ հողային օրենսգրքի կարգավորումների համատեքստում հողօգտագործման բնագավառում համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի

փոխհարաբերությունների շրջանակը

պայմանավորված է

համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի

սեփական լիազորությունների իրականացմամբ և արտահայտվում է՝

1. համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման՝

- ✓ հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերի հաստատման,
- ✓ հողերի օգտագործման սխեմաների հաստատման,
- ✓ հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունների,
- ✓ հողամասերի օգտագործման տրամադրման կամ օտարման (ներառյալ՝ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ՊՄԳ ծրագրով նախատեսված դեպքերում) գործընթացներում:

2. համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետության սեփականություն հանդիսացող հողամասերի (բացառությամբ՝ իրավաբանական անձանց մասնավորեցման (սեփականաշնորհման), կառուցապատված հողամասերի (այդ թվում՝ կառուցապատված հողամասերի օպտիմալացման արդյունքով առանձնացված՝ չկառուցապատված հողամասերի), ինչպես նաև պետական կամ ենթակա պետական մարմիններին հանձնված (ամրացված) պետական հողամասերի դեպքերում՝ պետական գույքի կառավարման լիազոր մարմինը՝ «Պետական գույքի

մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» և «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, հողային օրենսգրքով, մասնավորեցման և օտարման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված **կարգով նախատեսված դեպքերի) անհատույց տրամադրման գործընթացներում:**

3. հողային օրենսդրության կիրառման, հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողական լիազորությունների իրականացման գործընթացներում:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի կարգավորումների համատեքստում համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպման և համայնքի բյուջեի կառավարման

փոխհարաբերություններ շրջանակը

պայմանավորված է

համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի

սեփական լիազորությունների իրականացմամբ և արտահայտվում է՝

1. համայնքի սոցիալական ենթակառույցները զարգացնելու նպատակով ներդրումներ կատարելու համար վարկ ստանալու պայմանագիր կնքման կամ օրենքով սահմանված կարգով համայնքային արժեթղթերի թողարկման,

2. համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման և հաստատման,

3. համայնքի բյուջեի նախագծի մշակման և հաստատման,

4. համայնքի բյուջեի հաստատման առնչությամբ՝ հրաժարական տալու միջոցով **համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման,**

5. համայնքի բյուջեում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման,

6. համայնքի բյուջեի կատարման վերահսկողության,

7. համայնքի բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումների ներկայացման,

8. մինչև համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացումը հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման, հանրային բաց լսումներում

կամ քննարկումներում ստացված և ընդունված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ավագանուն տեղեկատվության տրամադրման,

9. համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության ներկայացման և հաստատման,

10. համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը չհաստատվելու դեպքում **համայնքի ղեկավարի կողմից հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցման**

գործընթացներում:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի կարգավորումների համատեքստում քաղաքաշինության բնագավառում

համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի

փոխհարաբերություններ շրջանակը

պայմանավորված է

համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի

սեփական լիազորությունների իրականացմամբ և արտահայտվում է՝

1. համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի և քաղաքաշինական գոտիավորման նախագծի կամ դրանց փոփոխությունների ու նախագծման առաջադրանքների այդ թվում՝ վերջիններիս կազմում մշակվող՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունների և նախագծման առաջադրանքների) մշակման, ներկայացման և հաստատման **գործընթացներում:**

2. որպես ինքնուրույն փաստաթուղթ՝ մշակված գոտիավորման նախագծի (եթե այն պարունակում է հաստատված գլխավոր հատակագծով սահմանված պահանջների փոփոխություն, ապա համայնքի ավագանու կողմից գոտիավորման նախագիծը հաստատվում է գլխավոր հատակագծի՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքին համապատասխան կատարված փոփոխությունները հաստատվելուց հետո) հաստատման **գործընթացներում:**

3. գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի իրագործման,

քաղաքաշինական քարտեզի կազմման, վարման և հաստատման **գործընթացներում:** **4.** համայնքի քաղաքաշինական կանոնադրության կազմման, ներկայացման և հաստատման **գործընթացներում:**

Թեմա 4. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով համայնքի ղեկավարին վերապահված ոլորտային լիազորությունների ընդհանուր բնութագիրը

ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ	
ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՄԱՎՈՐ
Համայնքի պարտադիր խնդիրները հանրային նշանակության այն խնդիրներն են, որոնց լուծմամբ ապահովվում է համայնքի **բնականոն կյանքի ընթացքը:**	Համայնքի **կամավոր խնդիրներն** այն խնդիրներն են, որոնցով համայնքային կյանքի բնականոն ընթացքն ուղղակիորեն պայմանավորված չէ, և կարող են իրականացվել, միայն պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ **ֆինանսական միջոցներից բացի, հավելյալ ֆինանսական միջոցների առկայության** դեպքում:
Համայնքի պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունները **սահմանվում են օրենքով:**	Համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և իրականացման կարգը սահմանվում են **ավագանու որոշմամբ:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- համայնքի կայուն զարգացումը.
- գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը.
- համայնքի գույքի կառավարումը.
- նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը.
- համայնքի մշակութային կյանքի կազմակերպումը.
- համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը.

- համայնքում մարզական կյանքի կազմակերպումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը.
- համայնքում բնակարանային շինարարության խթանումը.
- համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը.
- համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը.
- պետության պաշտպանության իրականացման աջակցումը.
- աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.
- համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը.
- համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը՝ ներառյալ համայնքում էկոլոգիական կրթության և դաստիարակության խթանումը.
- համայնքներում զբոսաշրջության զարգացման խթանումը.
- համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումը.
- համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը.
- համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի առաջնային բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը.
- համայնքի հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանումը.
- բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված է, որ՝

**սոցիալական աջակցության վերաբերյալ
համայնքի կամավոր խնդիրները լուծելու նպատակով
համայնքի կողմից կարող են՝**

1) տրամադրվել «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սոցիալական ծառայությունները, բացառությամբ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում նշված նպաստների կամ այլ դրամական օգնությունների տրամադրման.

2) մշակվել «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության չսահմանած այլ սոցիալական ծառայությունների տեսակներ՝ սոցիալական աջակցության ոլորտում պետական լիազոր մարմնի գրավոր համաձայնությամբ.

3) իրականացվել կամավորների հավաքագրում, համապատասխան սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում օրենսդրությամբ սահմանված կարգով կամավորների ընդգրկում և նրանց աշխատանքի վերահսկում:

**Տեղական ինքնակառավարման մարմինների
լիազորությունները
լինում են սեփական՝
համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով,
ինչպես նաև պետության կողմից օրենքով
պատվիրակված՝
պետական մարմինների լիազորությունների
առավել արդյունավետ իրականացման նպատակով:**

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ՍԵՓԱԿԱՆ	ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՕՐԵՆՔՈՎ ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ
Համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով	Պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով համայնքի ղեկավարին վերապահված են սեփական լիազորություններ 18 բնագավառներում (ոլորտներում):

- Ընդհանուր լիազորություններ,
- Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների,
- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության
- Ֆինանսների,
- Հանրային միջոցառումների կանոնակարգման,
- Պաշտպանության կազմակերպման,
- Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման,
- Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության,
- Հողօգտագործման,
- Տրանսպորտի,
- Առևտրի և ծառայությունների,
- Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների,
- Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի,
- Սոցիալական պաշտպանության,
- Գյուղատնտեսության,
- Անասնաբուժության և բուսասանիտարիայի,
- Շրջակա միջավայրի պահպանության,
- Զբոսաշրջության:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով

սահմանված են համայնքի ավագանու

ընդհանուր լիազորությունները (դրանք թվով 59-ն են), իսկ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-52-րդ հոդվածներով սահմանված են

նաև համայնքի ղեկավարի լիազորությունները

նրա գործունեության 18 բնագավառներում:

Գործունեության յուրաքանչյուր բնագավառում օրենքով

սահմանված են համայնքի ղեկավարի որոշակի թվով սեփական և (կամ) պետության կողմից պատվիրակված լիազորություններ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով

համայնքի ղեկավարի գործունեության 11 բնագավառներում

սահմանված են

համայնքի ղեկավարի կողմից

պետության կողմից պատվիրակված լիազորությունների

իրականացման իրավակարգավորումներ:

Համայնքի պարտադիր խնդիրների լուծումները ըստ՝ համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունների բնագավառների (ոլորտների) համապատասխանության

Հ/Հ	Պարտադիր խնդիրը	Համայնքի ղեկավարի լիազորությունների բնագավառը
1	Համայնքի կայուն զարգացումը	Ընդհանուր
2	Գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը	Ընդհանուր
3	Համայնքի գույքի կառավարումը	Ընդհանուր
4	Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը	Կրթություն, մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ
5	Համայնքի մշակութային կյանքի կազմակերպումը	Կրթություն, մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ
6	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը	Սոցիալական պաշտպանություն
7	Համայնքում մարզական կյանքի կազմակերպումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը	Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ
8	Համայնքում բնակարանային շինարարության խթանումը	Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն
9	Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը	Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն
10	Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը	Տրանսպորտ
11	Պետության պաշտպանության իրականացման աջակցումը	Պաշտպանության կազմակերպում

Հ/Հ	Պարտադիր խնդիրը	Համայնքի ղեկավարի լիազորությունների բնագավառը
12	Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը	Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում
13	Համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը	Գյուղատնտեսություն, Անասնաբուժություն և բուսասանիտարիա
14	Համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը	Շրջակա միջավայրի պահպանություն, Անասնաբուժություն և բուսասանիտարիա
15	Համայնքներում զբոսաշրջության զարգացման խթանումը	Զբոսաշրջություն
16	Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումը	Կրթություն, մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ
17	Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը	Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, Սոցիալական պաշտպանություն
18	Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի առաջնային բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը	Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ
19	Համայնքի հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը	Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն
20	Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով	Ընդհանուր

Աղյուսակից երևում է, որ համայնքի 20 պարտադիր խնդիրներից 4-ը (հհ. 1, 2, 3, 20) համապատասխանում են համայնքի ղեկավարի ընդհանուր լիազորություններին կամ նրա գործունեության միանգամից մի քանի բնագավառների, այդ պատճառով այդ պարտադիր խնդիրների դիմաց 3-րդ սյունակում նշվել է «ընդհանուր»: Մնացյալ 16 պարտադիր խնդիրներն ուղղակիորեն առնչվում են համայնքի ղեկավարի լիազորությունների մեկ կամ

մի քանի բնագավառներին, այդ պատճառով այդ պարտադիր խնդիրների դիմաց 3-րդ սյունակում նշվել է օրենքով սահմանված համապատասխան բնագավառ(ներ)ի անվանում(ներ)ը:

Դրա հետ մեկտեղ, պետք է նկատել, որ որոշ բնագավառների համայնքի ղեկավարի լիազորությունները համապատասխանում են օրենքով սահմանված միանգամից մի քանի պարտադիր խնդիրներ: Այսպես, «Կրթություն, մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ» բնագավառին համապատասխանում են օրենքով սահմանված 3 պարտադիր խնդիրներ (հհ. 4, 5, 16), «Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ» բնագավառին համապատասխանում են 3 պարտադիր խնդիրներ (հհ. 7, 17, 18), «Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն» բնագավառին համապատասխանում են 2 պարտադիր խնդիրներ (հհ. 8, 9), «Սոցիալական պաշտպանություն» բնագավառին համապատասխանում են 2 պարտադիր խնդիրներ (հհ. 6, 17):

Եվ, ընդհակառակը, համայնքի պարտադիր խնդիրներից երեքից (հհ. 13, 14, 17) յուրաքանչյուրին համապատասխանում են համայնքի ղեկավարի լիազորությունների 2-ական բնագավառներ:

Կարևոր է իմանալ, որ ...

Այլ օրենքներով ՏԻՄ-երի համար սահմանված լիազորությունները, բացառությամբ պետության պատվիրակած լիազորությունների, համայնքները իրականացնում են որպես սեփական լիազորություններ:

ՄԱՍ 2. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ)

ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.

Ավագանու հերթական նիստից տասն օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակել էր ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը:

Ավագանու անդամներին նիստի օրակարգում ընդգրկված հարցերի նախագծերը և դրանց կից փաստաթղթերը տրամադրվել էին նիստից մեկ շաբաթ առաջ: Նիստում համայնքի ղեկավարը օրակարգում ընդգրկված հարցերից մեկի քննարկման ժամանակ արտահերթ ելույթ ունենալու համար ձայն տրամադրեց իր տեղակալին:

Ավագանու ընդդիմադիր խմբակցությունն առաջարկում է ձայն չտրամադրել համայնքի ղեկավարի տեղակալին, հաշվի առնելով, որ նրա որպես համայնքի ղեկավարի տեղակալ նշանակվելու թեկնածությունը ավագանու կողմից երկու անգամ չեր հաստատվել և համայնքի ղեկավարը իրավունք չուներ այդ անձին նշանակելու տեղակալ, այլապես իրենց խմբակցությունը կդադարեցնի նիստին մասնակցությունը և նիստը չի կայանա:

Առաջարկել ստեղծված իրավիճակում լուծումը:

Լուծումը՝ համայնքի ղեկավարը ներկայացնում է, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համայնքի ղեկավարի տեղակալներին համայնքի ղեկավարի ներկայացմամբ նշանակում է ավագանին՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Համայնքի ղեկավարի տեղակալի թեկնածությունը ավագանու կողմից երկու անգամ չհաստատվելու դեպքում վերջինս նշանակվում է համայնքի ղեկավարի կողմից և համայնքի ղեկավարի տեղակալներն իրավունք ունեն մասնակցելու ավագանու նիստերին, արտահերթ ելույթ ունենալու, ինչպես նաև պատասխանելու հարցերին:

ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.

Համայնքի ղեկավարը ավագանու նիստի քննարկմանն է ներկայացնում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին որոշման նախագիծը: Զեկուցողը ներկայացնում է որոշման նախագիծը, նախագծի հիմնավորումը, հաշվետվությունը, դրա հանրային քննարկման արդյունքների մասին ամփոփաթերթը, աուդիտորական մասնագիտացված կազմակերպության եզրակացությունը, սակայն համայնքի ավագանին չի հաստատում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Համայնքի ղեկավարը դնում է հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը:

Ինչպիսի՞ լուծում կարող է ստանալ գործընթացը:

Լուծումը՝ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը չհաստատվելու դեպքում համայնքի ղեկավարը դնում է հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը: Եթե համայնքի ավագանին համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, իր անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համարվում է հաստատված:

Եթե համայնքի ավագանին այնուամենայնիվ իր որոշմամբ համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, իր անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունում է հրաժարականը, ապա համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը նույնպես համարվում է հաստատված:

Վարժություն 1. Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները

Խմբով քննարկեք և փորձեք դասակարգել ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները:

N	Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորություններ	Ավագանու լիազորությունները	Համայնքի ղեկավարի լիազորություն-ները
1.	Օրենքով սահմանված դեպքերում հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը		
2.	Օրենքով սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանն իրազեկում է միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին		
3.	Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության		
4.	Հաստատում է համայնքի զինանշանը		
5.	Որոշում է կայացնում միջհամայնքային միավորումում իր ներկայացուցիչը նշանակելու վերաբերյալ		
6.	Կազմակերպում է համայնքի բնակավայրերի բարեկարգումը և կանաչապատումը		
7.	վերահսկում է համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը		
8.	Օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը		
9.	Սահմանում է այն շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները, որտեղ իրականացվում կամ մատուցվում են քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ		
10.	Կազմակերպում է համայնքի արխիվային գործի վարումը		

Վարժություն 1. Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները

Խմբով քննարկեք և փորձեք դասակարգել ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները:

N	Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորություններ	Ավագանու լիազորությունները	Համայնքի ղեկավարի լիազորությունները
1.	Օրենքով սահմանված դեպքերում հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը		
2.	Օրենքով սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանն իրազեկում է միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին		
3.	Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության		
4.	Հաստատում է համայնքի զինանշանը		
5.	Որոշում է կայացնում միջհամայնքային միավորումում իր ներկայացուցիչը նշանակելու վերաբերյալ		
6.	Կազմակերպում է համայնքի բնակավայրերի բարեկարգումը և կանաչապատումը		
7.	Վերահսկում է համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը		
8.	Օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը		
9.	Սահմանում է այն շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները, որտեղ իրականացվում կամ մատուցվում են քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ		
10.	Կազմակերպում է համայնքի արխիվային գործի վարումը		

Վարժություն 2. Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները

Վարժության նկարագրությունը

Մասնակիցները բաժանվում են 2 կամ 3 խմբի, կախված նրանց ընդհանուր թվաքանակից, յուրաքանչյուր խմբում ոչ պակաս 5 և ոչ ավել 10 մասնակից:

Յուրաքանչյուր խմբի տրամադրվում է սույն վարժությունից 1 օրինակ, արդեն իսկ կետագծերով կտրտված լիազորությունները, որտեղ որպես գլխագրեր պետք է օգտագործվեն հետևյալ թերթիկները՝ **«Ավագանու լիազորություններ», «Սեփական պարտադիր լիազորություններ»** և **«Պետության պատվիրակված լիազորություններ»:**

Խմբերին տրվում է 15 րոպե ժամանակ վերը նշված լիազորությունները ըստ համապատասխան գլխագրերի տակ դասավորելու համար: Դրա համար սեղանների վրայից ամեն ինչ վերցվում է, որպեսզի հնարավոր լինի լիազորությունները շարքով դասավորել:

Վերջացնելուց հետո յուրաքանչյուր խմբից 1 հոգի տեղափոխվում է մյուս խումբ, որպեսզի քննարկման ժամանակ հետևի լիազորությունների դասավորվածությանը: Խմբերից մեկից որևէ մեկը սկսում է կարդալ **«Ավագանու լիազորություններ»** գլխագրի տակ դասավորած լիազորությունները: Մյուս խմբերը գտնում են իրենց մոտ այդ լիազորությունը: Կազմակերպվում է շատ կարճ քննարկում: Եթե լիազորությունը ճիշտ տեղում է, ապա թողնվում է իր տեղում, եթե սխալ տեղում է, ապա տեղափոխվում է համապատասխան լիազորության գլխագրի սյունակ, բայց դրվում է գլխագրի վերևից:

Վերջացնելուց հետո մյուս խմբից որևէ մեկը կարդում է իրենց կողմից դասավորված **«Սեփական պարտադիր լիազորություններ»** գլխագրի տակ դասավորած լիազորությունները: Մյուս խմբերը գտնում են իրենց մոտ այդ լիազորությունը: Կազմակերպվում է շատ կարճ քննարկում: Եթե լիազորությունը ճիշտ տեղում է, ապա թողնվում է իր տեղում, եթե սխալ տեղում է, ապա տեղափոխվում է համապատասխան լիազորության գլխագրի սյունակ, բայց դրվում է գլխագրի վերևը:

Նույն ձևով ստուգվում է **«Պետության պատվիրակված լիազորություններ»** գլխագրի տակ դրված լիազորությունները:

Ամենաշատ ճիշտ պատասխան ունեցող թիմը ճանաչվում է հաղթող:

ՍԵՓԱԿԱՆ
ՊԱՐՏԱԴԻՐ

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿԱԾ

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՎԱԳԱՆՈՒ

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ այդ միջոցառումներին մասնակցելու ցանկություն հայտնած համայնքի հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար.

Կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, դրանում առաջարկվող փոփոխությունները, բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխություններն ու ապահովում է բյուջեի կատարումը, որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվություն է ներկայացնում համայնքի ավագանուն.

Օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը.

Տնօրինում է համայնքի բյուջեի միջոցները.

Օրենքով սահմանված կարգով վարում է համայնքի զինապարտների գրանցամատյան, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացնում է տարածքային զինվորական կոմիսարիատ.

Իրականացնում է համայնքի բնակչության ազդարարումը:

Կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում է համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը՝ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը և քաղաքաշինական գոտիավորման նախագիծը կամ դրանց փոփոխություններն ու նախագծման առաջադրանքները:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցնում է ճարտարապետաշինարարական նախագծերը, տալիս է շինարարության (քանդման) թույլտվություն, միջոցառումներ է ձեռնարկում շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու համար.

Կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ.

Օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմում է համայնքների հողերի օգտագործման սխեմաներն ու քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը.

Կազմակերպում է համայնքի բնակավայրերի բարեկարգումը և կանաչապատումը.

Կազմակերպում է համայնքային գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները, իրականացնում է «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ.

Կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, երիտասարդական կենտրոնների, գրադարանների, կրթական, մշակութային և երիտասարդական այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները.

Կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը

համայնքի տարածքում.

Կատարում է համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, դրանց շինարարությունը և վերանորոգումը.

Օրենքով նախատեսված դեպքերում տալիս է ոգելից խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտի արտադրատեսակների իրացման թույլտվություն.

Միջոցներ է ձեռնարկում համայնքում կյանքի դժվարին իրավիճակ առաջացնող ռիսկերի ու դրանց պատճառների վաղ հայտնաբերման և կանխարգելման, ինչպես նաև համայնքում սոցիալական աշխատանքի արդյունավետ մեխանիզմների կիրառման և շարունակական զարգացման ուղղությամբ.

Սահմանում է խնամակալություն, հոգաբարձություն, իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորություններ.

Սահմանում է տեղամասային կենտրոնի գտնվելու վայրը, ապահովում քվեարկության սենյակը սահմանելու և քվեարկության սենյակի՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխան կահավորումը.

Աջակցում է զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների, հաշմանդամություն ունեցող զինծառայողների սոցիալական խնդիրների լուծմանը.

Կազմակերպում է համայնքի քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորումը և իրականացումը.

Աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության միջոցառումների իրականացմանը:

Իրականացնում է վթարային և վերականգնողական միջոցառումներ՝ արտակարգ իրավիճակներում համայնքային ենթակայության կենսաապահովման օբյեկտների անխափան աշխատանքն ապահովելու համար.

Իրավասու մարմինների ներկայացմամբ հաստատում և թույլատրում է համայնքային

ենթակայության ճանապարհների երթևեկության նշանների տեղակայումն ու հանումը:

Օրենքով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը, ցամաքային տարածքի ծածկույթի ընթացիկ դասակարգումը և կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը.

Կազմակերպում է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ:

Աջակցում է համայնքի տարածքում իրականացվող վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ և սանիտարահակահամաճարակային աշխատանքներին:

Ապահովում է հողերի պահպանությունը հողատարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով, արտադրական և կենցաղային թափոններով աղտոտումից:

Հաստատում է միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, միջնաժամկետ ծախսերի ծրագրի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները, բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

Վերահսկում է համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը

Վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ

Սահմանում է համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ.

Հաստատում է համայնքի զարգացման ծրագրերը

Օրենքով սահմանված դեպքերում և կարգով ընտրում է համայնքի ղեկավարին.

Օրենքով սահմանված կարգով որոշում է ընդունում համայնքի ղեկավարին

անվստահություն հայտնելու վերաբերյալ.

Որոշում է կայացնում միջհամայնքային միավորումներ ստեղծելու մասին, ինչպես նաև առաջարկություն է ներկայացնում պետական լիազորված մարմին՝ այլ համայնքների հետ միավորվելով նոր համայնք ձևավորելու վերաբերյալ.

Օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրման, վերակազմակերպման կամ լուծարման մասին.

Օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.

Սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը.

Որոշում է կայացնում վարկերի և օրենքով սահմանված կարգով այլ միջոցների ներգրավման վերաբերյալ.

Համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը

Օրենքով սահմանված դեպքերում հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը.

Հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը.

Քննարկում և որոշում է կայացնում համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ.

Քննարկում և որոշում է կայացնում համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու վերաբերյալ.

Քննարկում և որոշում է կայացնում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի,

անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ.

Համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում աշխատակազմի, համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ:

Օրենքով սահմանված կարգով և դեպքերում հաստատում է համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների և վերստուգիչ մարմինների կազմերը:

Որոշում է կայացնում համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների անվանակոչման և անվանափոխման վերաբերյալ

Վարժություն 2. Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները

Ավագանու լիազորություններ

1. Հաստատում է միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, միջնաժամկետ ծախսերի ծրագրի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները, բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

2. Վերահսկում է համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը.

3. Վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ.

4. Սահմանում է համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ.

5. Հաստատում է համայնքի զարգացման ծրագրերը.

6. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով ընտրում է համայնքի ղեկավարին.

7. Օրենքով սահմանված կարգով որոշում է ընդունում համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու վերաբերյալ.

8. Որոշում է կայացնում միջհամայնքային միավորումներ ստեղծելու մասին, ինչպես նաև առաջարկություն է ներկայացնում պետական լիազորված մարմին՝ այլ համայնքների հետ միավորվելով նոր համայնք ձևավորելու վերաբերյալ.

9. Օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրման, վերակազմակերպման կամ լուծարման մասին.

10. Օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.

11. Սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը.

12. Որոշում է կայացնում վարկերի և օրենքով սահմանված կարգով այլ միջոցների ներգրավման վերաբերյալ.

13. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման

ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը.

14. Օրենքով սահմանված դեպքերում հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը.

15. Հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը.

16. Քննարկում և որոշում է կայացնում համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ.

17. Քննարկում և որոշում է կայացնում համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու վերաբերյալ.

18. Քննարկում և որոշում է կայացնում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ.

19. Համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում աշխատակազմի, համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ.

20. Օրենքով սահմանված կարգով և դեպքերում հաստատում է համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների և վերստուգիչ մարմինների կազմերը.

21. Որոշում է կայացնում համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների անվանակոչման և անվանափոխման վերաբերյալ.

Սեփական պարտադիր լիազորություններ

1. Ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ այդ միջոցառումներին մասնակցելու ցանկություն հայտնած համայնքի հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար.

2. Կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, դրանում առաջարկվող փոփոխությունները, բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխություններն ու ապահովում է բյուջեի կատարումը, որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվություն է ներկայացնում համայնքի ավագանուն.

3. Օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը.

4. Տնօրինում է համայնքի բյուջեի միջոցները.

5. Կատարում է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առնում քաղաքացիների հանրագրերը, դիմումներն ու բողոքները և ձեռնարկում է համապատասխան միջոցներ.

6. Օրենքով սահմանված կարգով վարում է համայնքի զինապարտների գրանցամատյան, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացնում է տարածքային զինվորական կոմիսարիատ.

7. Իրականացնում է համայնքի բնակչության ազդարարումը.

8. Կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը.

9. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում է համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը՝ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը և քաղաքաշինական գոտիավորման նախագիծը կամ դրանց փոփոխություններն ու նախագծման առաջադրանքները.

10. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցնում է ճարտարապետաշինարարական նախագծերը, տալիս է շինարարության (քանդման) թույլտվություն, միջոցառումներ է ձեռնարկում շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու համար.

11. Կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ.

12. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմում է համայնքների հողերի օգտագործման սխեմաներն ու քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը.

13. Կազմակերպում է համայնքի բնակավայրերի բարեկարգումը և կանաչապատումը.

14. Կազմակերպում է համայնքային գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները, իրականացնում է «Հուղարկավորությունների

կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ.

15. Կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, երիտասարդական կենտրոնների, գրադարանների, կրթական, մշակութային և երիտասարդական այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները.

16. Կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում.

17. Կատարում է համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, դրանց շինարարությունը և վերանորոգումը.

18. Օրենքով նախատեսված դեպքերում տալիս է ոգելից խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտի արտադրատեսակների իրացման թույլտվություն.

19. Միջոցներ է ձեռնարկում համայնքում կյանքի դժվարին իրավիճակ առաջացնող ռիսկերի ու դրանց պատճառների վաղ հայտնաբերման և կանխարգելման, ինչպես նաև համայնքում սոցիալական աշխատանքի արդյունավետ մեխանիզմների կիրառման և շարունակական զարգացման ուղղությամբ.

20. Սահմանում է խնամակալություն, հոգաբարձություն, իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորություններ.

Պետության պատվիրակված լիազորություններ

1. Սահմանում է տեղամասային կենտրոնի գտնվելու վայրը, ապահովում քվեարկության սենյակը սահմանելու և քվեարկության սենյակի՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխան կահավորումը.

2. Աջակցում է զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների, հաշմանդամություն ունեցող զինծառայողների սոցիալական խնդիրների լուծմանը.

3. Կազմակերպում է համայնքի քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորումը և իրականացումը.

4. Աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության միջոցառումների իրականացմանը.

5. Իրականացնում է վթարային և վերականգնողական միջոցառումներ՝ արտակարգ իրավիճակներում համայնքային ենթակայության կենսաապահովման օբյեկտների անխափան աշխատանքն ապահովելու համար.

6. Իրավասու մարմինների ներկայացմամբ հաստատում և թույլատրում է համայնքային ենթակայության ճանապարհների երթևեկության նշանների տեղակայումն ու հանումը.

7. Օրենքով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը, ցամաքային տարածքի ծածկույթի ընթացիկ դասակարգումը և կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը.

8. Կազմակերպում է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ.

9. Աջակցում է համայնքի տարածքում իրականացվող վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ և սանիտարահակահամաճարակային աշխատանքներին.

10. Ապահովում է հողերի պահպանությունը հողատարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով, արտադրական և կենցաղային թափոններով աղտոտումից.

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Հարց 1. Համայնքի ղեկավարը պատասխանատու է՝

1) ՀՀ կառավարության առջև.
2) **ավագանու առջև.**
3) լիազոր մարմնի առջև:

Հարց 2. Եթե ավագանու որոշումը համայնքի ղեկավարի կարծիքով, հակասում է ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին կամ ավագանու նախկին որոշումներին, ապա ի՞նչ ժամկետում համայնքի ղեկավարը ավագանուն կարող է ներկայացնել գրավոր առարկություններ և առաջարկություններ՝ համապատասխան հիմնավորումներով.

1) հնգօրյա ժամկետում.
2) **եռօրյա ժամկետում.**
3) տասնօրյա ժամկետում:

Հարց 3. Եթե համայնքի ավագանին գտնի, որ համայնքի ղեկավարի որոշումը հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին, ապա նա պարտավոր է՝

1) համայնքի ղեկավարին հայտարարել խիստ նկատողություն.
2) մարզպետին ներկայացնել գրավոր բողոք
3) **համայնքի ղեկավարին ներկայացնել գրավոր բողոք՝ համապատասխան հիմնավորումներով, առաջարկելով համայնքի ղեկավարին փոփոխելու իր որոշումը:**

Հարց 4. Համայնքի ավագանու որոշումները՝ համայնքի ղեկավարը, իսկ համայնքի ղեկավարի որոշումները՝ համայնքի ավագանին կարող են բողոքարկել՝

1) **դատական կարգով.**
2) վերադասության կարգով.
3) դասական կարգով:

Հարց 5. Համայնքի ավագանու նիստերի օրակարգի նախագիծը ձևավորվում է՝

1) համայնքի ղեկավարի կողմից աշխատակազմի քարտուղարին՝ նիստից առնվազն տասն օր առաջ ներկայացված գրավոր հարցերից.
2) ավագանու անդամների, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարների կողմից աշխատակազմի քարտուղարին՝ նիստից առնվազն տասն օր առաջ ներկայացված գրավոր հարցերից.
3) **համայնքի ղեկավարի, ավագանու անդամների, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարների կողմից աշխատակազմի քարտուղարին՝ նիստից առնվազն տասն օր առաջ ներկայացված գրավոր հարցերից:**

Հարց 6. Ավագանու նիստերի արձանագրություններն ստորագրում են՝

1) ավագանու անդամները և աշխատակազմի քարտուղարը.
2) **նիստը վարողը և ավագանու նիստին մասնակցած անդամները.**
3) համայնքի ղեկավարը և աշխատակազմի քարտուղարը:

Հարց 7. Համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ավագանի ունեցող համայնքի ավագանին կարող է ներկայացնել համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու որոշման նախագիծ՝

1) **իր անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ.**
2) իր անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի նախաձեռնությամբ.
3) իր անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի նախաձեռնությամբ:

Հարց 8. Ե՞րբ կարող է համայնքի ավագանին մեծամասնական ընտրակարգով ընտրված համայնքի ղեկավարին անվստահություն հայտնել.

1) համայնքի ղեկավարի լիազորություններն ստանձնելուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո.
2) համայնքի ղեկավարի լիազորություններն ստանձնելուց վեց ամիս հետո.
3) **ՀՀ օրենսդրությամբ մեծամասնական ընտրակարգով ընտրված համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու իրավակարգավորում չի նախատեսվել:**

Հարց 9. Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ ներկայացնելու նախաձեռնություն կարող է ցուցաբերվել համայնքի ղեկավարի լիազորություններն ստանձնելուց և անվստահության հարցը քննարկելուց՝

1) ոչ ուշ, քան մեկ տարի հետո.
2) **ոչ շուտ, քան մեկ տարի հետո.**
3) համայնքի ղեկավարի լիազորություններն ստանձնելուց վեց ամիս հետո:

Հարց 10. Ավագանու անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել՝ ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, եթե՝

1) նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից կամ հանձնաժողովի նիստերի կեսից.
2) նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում բացակայել է ավագանու խմբակցության նիստերի կեսից.
3) **նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից կամ հանձնաժողովի նիստերի կեսից:**

ՆՅՈՒԹԵՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ձեռնարկ համայնքի ավագանու անդամների և անդամության թեկնածուների համար, Հայաստանի ավագանիների ասոցիացիա, 2016 թ.

2. «Տեղական ինքնակառավարման հիմունքները», ուսումնական ձեռնարկ, Է. Օրդյանի ընդհանուր խմբագրությամբ, «Պետական ծառայություն», Երևան, 2002 թ.

3. Ղազարյան Է., 100 հարց և պատասխան տեղական ինքնակառավարման մասին, հեղինակային հրատարակչություն, Երևան, 2003 թ.

4. Շահբազյան Վ., Սահակյան Գ. «Համայնքի ֆինանսական կառավարում», ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2009 թ.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն
2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
3. ՀՀ հողային օրենսգիրք
4. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք
5. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Համայնքի ավագանի-համայնքի ղեկավար փոխհարաբերությունների շրջանակը

Հեղինակ՝ Ժիրայր Ղազարյան

Համակարգչային ձևավորող՝ Հասմիկ Նավասարդյան

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ